



Հայացք Ռոբերտ Կամոյանի արվեստին

ԲՈՐԻՍ ՄԻՆԱՅԱՆ

Կապանի ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն, ՀՀ նկարիչների միության անդամ



Արվեստաբանների կողմից դեռ ես լուրջ ու խորը չբացահայտված Ռոբերտ Կամոյանի արվեստը խորքային է եւ պատշաճ վերլուծման կարիք ունեցող:

Նրա արվեստում չկան ոճավորումներ, ազնիվ է եւ կրուն է հավերժական բնույթ: Նա զարգացման հեռանկար է բացում աճող սերնդի համար, ամեն ինչ կենդանի պրոցեսի մեջ է: Նա ձգտում է զեղարվեստական հնարանքներով իմաստավորել զգացածի արժեքը եւ ազնվորեն վերածել հեքիաթի: Ստեղծված գործերում անկանխատեսելի են դառնում բովանդակությունը, սերը, ժայռը, լեռը, ծառը... Գեղանկարչությունը լուռ արվեստ է, նրան մոտեցող յուրաքանչյուր ազնիվ մարդ ինձ համար մարգարե է, առաքելություն ունի հնչեղություն հաղորդելու կյանքին ու տիեզերականին:

Լեռան արահետով քայլող Կամոյանն ընդառաջ գնալով հորիզոններին, տիրակալն է իր երեւակայական աշխարհին՝ լուռ կրելով իր խաչը:

Մարդուն յուրահատուկ փորձանքներին ենթակա արվեստագետ է, փոխակերպումներին՝ ներշնչանքով ընդառաջ գնացող, գեղեցկության դեմքին նայող:

«Նարեկացի» եւ «Քուչակ» ջրաներկ աշխատանքների շարքը տիեզերքի եզրին կարծես ճանապարհավերջ լինի:

Ինքնադիմանկարների շարքը հիմնավոր է, կլանող, հասունացած նշան մեծան պայթող, հանգրվանող...

Ստեղծված ինքնադիմանկարները թափանցիկ են, խելացնոր իր բնավորության մեծ անբռնազբոս, ազատ, անկառավարելի: Նա կեղտից ու քաղաքականությունից հեռու մարդ է, լեռան լանջից իջնող, մաքուր, պարզ, երկար...

Նրան հաջողվում է դատարկ տարածությունը, ճերմակ կտավները վերածել իրական կամ պայմանական միջավայրի: Ամենասովորական երեւույթներից աճող դրամայի նրա վրձինն ու միտքը դիտողի ուշադրությանն են հառնում անբացատրելի փայլատակունցներով, վկան «Պորտաքար» մոնումենտալ աշխատանքը:

Ստեղծագործելու ինքնատիպ մտածողությունը գերակշիռ է նրա վերջին կտավներում եւ գրաֆիկական աշխատանքներում, որոնք ծավալներով փոքր են, սակայն հնչել են ու գունատեղծման որոշակի ձեւեր ունեն: Վերացապաշտական, անառարկայական այս շարքն արված է սեւ-սպիտակով, խառը տեխնիկայով, ջրաներկով, ունի իրականությունից կտրված, բայց խոսուն պատկերներ ու խորություն:

Գեղանուշի եկեղեցու որմնակարը ստեղծելիս կենսունակ ու արարող Սյունեցի գագցել է եկեղեցու ելությունը: Նրա համոզման ու հասկացողության արդյունքում պարզ երեւում է, որ որմնակարը չի

Շարունակությունը էջ 6

ԿՅԱՆՔԻ ՈՒՐԻՆ

Օգվել է 1937թ. հունվարի 6-ին՝ Կապանում: Հայրը՝ Վարդան Կամոյանը, Լոռուց էր (ծնվել է Ալավերդիում), ուր նրա նախնիները եկել էին Ազուլիսից (պապը՝ Արշակը, որոշ ժամանակ բնակվել է Խնձորեսկում): Ռուսաստանում (Սվերդլովսկում) լեռնային ինժեների բարձրագույն կրթություն ստացած Վարդան Կամոյանը Կապան է եկել 1932 թվականին՝ գործուղմամբ՝ տեղի հանքարդյունաբերական ձեռնարկությունում աշխատելու համար: Կապանում էլ ընտանիք է ձևավորել եւ ապրել մինչեւ կյանքի վերջը: Մայրը՝ Վարդիթեր Կամոյանը, Վաչագան գյուղից էր՝ Օրբելյանների տոհմից (Ռոբերտ Կամոյանի վկայությամբ՝ հայտնի իշխանական տոհմից):

Ռոբերտ Կամոյանը միջնակարգ կրթությունը ստացել է Կապանի N3 (ռուսական) դպրոցում: Այնուհետեւ մեկնել է Լենինգրադ եւ ընդունվել տեղի Ի. Ռեպինի անվան զեղարվեստի ակադեմիան: 1954-55թթ. այնտեղ սովորելուց հետո, հոր առողջական վիճակով մտահոգ, երկրորդ կուրսից ուսումն ընդհատել է, վերադարձել Կապան եւ աշխատանքի անցել մսի կոմբինատի սառնարանային տնտեսությունում՝ կոմպրեսորային արտադրամասի մեքենավարի օգնական, ապա՝ Բարաբաթումի պղնձահանքում՝ բանվոր:

1958 թվականին, երբ արդեն վերականգնվել էր հոր առողջությունը, մեկնել է Երեւան, ընդունվել զեղարվեստաբանական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետ, որը, ռեժիսորա մասնագիտությամբ, ավարտել է 1963 թվականին:

Միաժամանակ սովորել է նույն ինստիտուտի գունանկարչական ֆակուլտետում, որն ավարտել է 1964-ին՝ նկարիչ-գունանկարչի ու մանկավարժի մասնագիտությամբ: Գեղարվեստաբանական ինստիտուտում ուսանել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Արմեն Գուլակյանի, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Էդուարդ Իսաբեկյանի եւ ճանաչված այլ նկարիչների, դերասանների եւ ռեժիսորների ղեկավարությամբ:

1965թ. աշխատել է Մեղրու շրջանի Ագարակ քաղաքի մշակույթի տան տնօրեն:

1966-67թթ. աշխատել է Երեւանի Հ.Թումանյանի անվան պետական տիկնիկային եւ Կ.Ստանիսլավսկու անվան պետական թատրոններում՝ ռեժիսոր, նկարիչ:

1967-98թթ. աշխատել է Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ բեմադրող ռեժիսոր, նկարիչ, գլխավոր նկարիչ: Չուգահեռաբար բեմական ձեւավորումներ է կատարել Գյումրիի, Գորիսի թատրոններում:

1964 թվականից մասնակցել է հանրապետական եւ համամիութենական ցուցահանդեսների: Անհատական ցուցահանդեսներ է բացել Լենինգրադում, Ռիգայում, Յուրմալայում, Վիլնյուսում, Երեւանում, Կապանում:

1971 թվականից գործում է նրա հիմնադրած նկարչական ստուդիան, որտեղ տարիների ընթացքում ուսանել են հարյուրից ավելի պատանիներ եւ աղջիկներ:

Ռոբերտ Կամոյանի ստեղծագործությունների մի մասը գտնվում է Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության, Լիտվայի, Լատվիայի եւ Էստոնիայի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում:

Ռոբերտ Կամոյանն ամուսնացել է 1968թ., ունի երկու զավակ եւ երեք թոռ: Կինը՝ Սվետլանա Օրբելյանը, ռուսաց լեզվի ուսուցչուհի է, աշխատել է Կապանի հանրակրթական դպրոցներում:

Արվեստագետի որդիները՝ հետեւելով հոր օրինակին, իրենց նույնպես նվիրել են նկարչությանը եւ փորձում են հոր ստեղծած մեծ հարստությանը հավելել իրենցը: Մեծ որդին՝ Լեւոնը, ավարտելով Երեւանի զեղարվեստի ակադեմիան, շարունակում է հոր ուղին, բայց արդեն մայրաքաղաք Երեւանում, իսկ փոքր որդին՝ Դավիթը, աշխատում է ստեղծագործում է Ռուսաստանի Դաշնությունում:

Այսօր էլ Ռոբերտ Կամոյանը շարունակում է ստեղծագործել երիտասարդական ավյունով: Նա, իր իսկ վկայությամբ, դեռեւս տասը տարվա ստեղծագործական աշխատանքի ծրագրեր ունի:

Նրա ստեղծագործությունների գլխավոր էյտմոտիվը մարդն է՝ իր հոգսերով, մտահոգություններով:

Այդ բոլորով հանդերձ՝ Ռոբերտ Կամոյանը դեռեւս չունի ստեղծագործությունների ամբողջական կատալոգ, որի ստեղծումն անհրաժեշտ է եւ հրատապ: Օրախնդիր է նաեւ նրա հազարից ավելի գեղանկարների պահպանության հարցը, որ հիմա գտնվում են գեղանկարչի արվեստանոցում:



Ինքնանկար, 80 x 60, կր. յուղ., 1970թ.



Երկնային երաժշտություն, 120 x 80, կր. յուղ., 2011թ.



Տամա, 80 x 60, կր. յուղ., 2010թ.



Սեր մահից հետո, 200 x 100, կր. յուղ., 2010թ.

Աշակերտները՝ ուսուցիչ Ռոբերտ Կամոյանի մասին

ՄԱՐԻԱ ՎԱՍԵՐԱՉՈՒՅԱՆ

Կապանի N2 ավագ դպրոցի աշակերտուհի



ՍԱՌԱ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կապանի N3 հիմնական դպրոցի աշակերտուհի



ՍՐԲՈՒՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կապանի N2 ավագ դպրոցի աշակերտուհի



ԷԼԵՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կապանի N2 ավագ դպրոցի աշակերտուհի



ԷԼԵՆԱ ԱՐՐԱՅԱՅԱՆ

Քաջարանի N2 միջնակարգ դպրոցի աշակերտուհի



Չորս ամսա է, ինչ հաճախում են Ռոբերտ Կամոյանի մոտ անհատական դասընթացների ել, անկեղծ ասած, չեն նկատել, թե ինչպես են անցել այդ ամիսները: Միշտ էլ հաճելի է շփվել բարի, կամեցող, բանիմաց մարդու հետ: Նա իր գործի նվիրյալն է: Հաճախ են նկատել, թե ինչպիսի եռանդով է արարում իր նկարները, թե ինչպիսի ապրումներ է ունենում յուրաքանչյուր գործ, կտավ ստեղծելիս: Ես հիանում եմ նրա աշխատասիրությամբ, անսպառ եռանդով: Մինչև անհատական դասընթացների հաճախելը պարոն Կամոյանի մասին շատ էի լսել, բայց այն, ինչ տեսա նրա արվեստանոցում՝ խոսքերով չեն կարող բացատրել: Դա մի ուրիշ աշխարհ է, որտեղ, շատ համեստ պայմաններում, ստեղծագործում եւ սերունդների համար անգին ժառանգություն է կուտակում Հայաստանի ամենատաղանդավոր արվեստագետներից մեկը՝ Ռոբերտ Կամոյանը:

Դժվարանում եմ խոսել իմ վարպետի մասին, ով դարձել է ինձ համար թանկ մարդկանցից մեկը: Երագում եմ ընդունվել Երեւանի գեղարվեստի ակադեմիա եւ ի սկզբանե վստահ էի, որ երազանքս կարող եմ իրականություն դարձնել միայն Ռոբերտ Կամոյանի մոտ ուսանելուց հետո: Նա ունի յուրահատուկ մտածելակերպ, հետաքրքիր մտքեր, որոնք պետք է լսել, հասկանալ ու ընդունել: Ռոբերտ Կամոյանն ապրում է ուրիշ աշխարհում, որտեղ իր համար կարեւորն իր նկարներն են: Յուրաքանչյուր գործ ստեղծելիս այնպիսի տպավորություն ենք ստանում՝ կարծես թե մեր վարպետին մի նոր գավակ է ծնվել, ում լույս աշխարհ գալով անչափ ուրախ ու երջանիկ է: Ես իմ վարպետին ցանկանում եմ առողջություն, թող շատ երկար ապրի, արարի, ստեղծի մեր եւ մեր ապագա սերունդների համար:

Ռոբերտ Կամոյանը մեր քաղաքի ամենատաղանդավոր մարդկանցից մեկն է: Արդեն երկու տարի է, ինչ նրա մոտ հաճախում են անհատական պարապուրեների եւ հենց այդ տարիների ընթացքում էլ փորձել եմ ճանաչել իմ վարպետին, լսել նրա խորհուրդները, ընկալել եւ այդ ամենն արտահայտել իմ ստեղծած գործերում: Նրա նկարներն արտահայտում են մեր այսօրվա կյանքը, կենցաղը, առօրյան: Բազմաթիվ նկարներ ունի, որտեղ մարդիկ գտնվում են խառը հոգեկան վիճակում եւ չեն կարողանում հասկանալ, թե ինչ է իրենց շուրջը կատարվում: Կապանցիներն այսօր Կամոյանի մասն արվեստագետների կարիքը շատ ունի: Ցավ եմ ապրում, երբ մարդիկ չեն կարողանում գնահատել նրա արվեստը, նրա ստեղծագործությունները: Չէ՞ որ ոչ ամեն օր է մեր փողոցի քաղաքում ծնվում նման տաղանդ, ով կարող է նկարների միջոցով գեղեցիկ պատկերներ կերտել: Վստահ եմ, որ իմ վարպետը երկար կյանք է ունենալու, քանի որ զբաղվում է իր հոգուն շատ հարազատ գործով:

Ռոբերտ Կամոյան մարդու, արվեստագետի մասին խոսք ասելը շատ դժվար է, քանի որ նա այն նկարիչներից է, որոնց արվեստը, վրձնի շարժումները նախ պետք է հասկանալ, ընկալել, նոր միայն որեւէ խոսք ասել: Արդեն չորս տարի է, ինչ նրա մոտ հաճախում եմ անհատական պարապուրեների, բայց շատ լավ գիտակցում եմ, որ երբեք չեմ կարող նկարել, կյանքի իրավիճակները պատկերել այնպես, ինչպես Ռոբերտ Կամոյանը: Նա մեզ սովորեցնում է եւ՝ գծանկարչություն, եւ՝ գունանկարչություն, եւ՝ կոմպոզիցիա ու այս ամենին գունարած հատ-հատ պատմում է հայտնի նկարիչների կյանքը, նրանց անցած ուղին ու նրանց կտավների յուրահատկությունները: Նրա յուրաքանչյուր նկարն իր մեջ մի ամբողջ պատմություն է պարունակում, նա կարողանում է ներկայացնել մարդկային տարբեր կերպարներ՝ կյանքի տարբեր իրավիճակներում: Կամոյանն արվեստի ոլորտում մեր ունեցած հարստությունն է, ում պետք է ամուր պահել:

Ռոբերտ Կամոյանի մասն աշխատասեր, գործին նվիրված մարդ իմ կյանքում դեռ չեմ հանդիպել: Նրա կտավներում պատկերված է մի այլ աշխարհ, որտեղ մարդիկ, իրենց կերպարներով արտահայտում են կյանքի տարբեր իրավիճակներ: Նա միշտ անմիջական շփման մեջ է գտնվում իր աշխատանքների հետ, նույնիսկ կարող է զարմանալի թվալ, բայց նա հաճախ է զրուցում նրանց հետ: Կամոյան մարդուն, արվեստագետին առաջին հերթին պետք է ճիշտ հասկանալ, գնահատել նրա գործերը, նոր կարծիք հայտնել: Համաձայն եմ՝ նրա ներաշխարհը դժվար է հասկանալ, բայց ընկալելուց հետո մարդ այնպիսի հետաքրքրությամբ է լցվում նրա հանդեպ, որ նրա նկարներից շատ դժվարությամբ ես բաժանվում: Աստված տա՝ իմ վարպետը երկար կյանք ունենա, ստեղծագործի եւ նորանոր գլուխգործոցներ ստեղծի:



Նադաշ
Հովնաթանի
մանկությունը,
200 x 100, կգ.
յուղ., 2009թ.



Մաքրյոնա
Սիբիրից, 80 x
60, կգ. յուղ.,
2010թ.



Քրիստոսը եւ Սամարացի կինը,
100 x 80, կգ. յուղ., 2010թ.

Ռոբերտ Կամոյանի բանաստեղծու- թյուններից

Ты сказала, что я – гений!
Ты, плутовка с гороно,
Да знаешь ли, что тот же гений
Сейчас не стоит ничего.
Иль думаешь, что просто манна
С небес падет – держи подол,
И ты, прекрасная Сусанна,
Пожнешь плоды с моих трудов!
Нет, милая, не так все просто,
Пока я до сего дошел,
Ломали сотню раз мне кости,
Извел немало я врагов.
И звали все меня повсюду,
И звали все меня: “Ты вор!” –
И улюлюкали на люду,
Пока – вконец! – прогнали вон.
Но, одаренный божьим даром,
Оставшись сам с собой один,
Решил я показать всех с нимбом,
Всех тех, кого считал врагом...
Теперь смотрю, как ты краснеешь
И говоришь, что гений я.
Эх, милая с прекрасной шеей,
Похож ли гений на меня?
Да посмотри ты на морщины,
На зубы, что теряют ряд,
Потом я покажу картины
До нас всех гениев подряд.
Вот, посмотри, вот это Джотто,
Вот Рафаэль, вот Мантенья,
Не надо плакать, ну-ну, то-то,
Ведь говорил – не гений я!

Ստեղծագործում են Ռոբերտ Կամոյանի որդիները



Լ. Կամոյան, Վաչագան




Ղ. Կամոյան, Խուսափուփի սփորոքի



ԼԵՎՈՆ ԿԱՄՈՅԱՆ

Ավարտելով
Երեւանի գեղար-
վեստի ակադե-
միան, շարունա-
կում է հոր ուղին,
բայց արդեն
մայրաքաղաք
Երեւանում



ՂԱՎԻԹ ԿԱՄՈՅԱՆ

Աշխատում է
ստեղծագործում
է Ռուսաստանի
Դաշնությունում

Хуступ! Хуступ! какая мощь,
какая ширь!
В твоей груди найду ли я
Бальзам от стрел врагов моих?
Как некогда скрывала ты
Отшельников от банд лихих,
Укрой сегодня ты меня,
Направь их стрелы в них самих!

☪☪☪

Я возьму тетради Анны,
Просмакую вновь и вновь.
Не хочу небесной манной,
Прочитаю про любовь!

☪☪☪

Я нежная ветка сирени.
-Не трогай, в моем цветке пчела!
Мораль без басни: на все красное
всегда
Смотри издалека!